

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

(Պատրաստողացիք զիմում են ուղղակի
Tiflis. Redakcia „Menk“)

Խմբագրատունը բաց է առտուտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն շաբաթով:

Հայտարարութիւնների համար փճարում են
խմբագրանշիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ով է մեղաւորը.— Եւրօքին տեսութիւնը:
Նշանակ զարթոյց, Նշանակ զերբէնդից, Ներքին
լուրերը.— Արտաքին տեսութիւնը, Թիֆլիսի:
Անգլիայի թագուհու զահական ճառը.— Մը-
շի կին Նեոպոլիտներ.— Յայտարարութիւններ.—
Բնաստիւրակներ, Խեղճութիւն:

ՈՎ Ե ՄԵՂԱՒՈՐ

Գրաւոր հաղորդակցութիւնները
և տպագրութեան միջոցները այն-
չափ հեշտացել են, այնչափ տա-
րածվել մեր ժամանակը, որ ան-
հերքելի իրողութիւն է ժողովրդի
կեանքը, կարիքը ու գրութիւնը
ճշդիւ իմանալու համար, հարկա-
ւոր է դիմել միայն լրագիրներին,
այլ ոչ թէ հեռու աշխարհից ե-
կող երկրներում կրկնող կուռնկնե-
րին:

Բայց աշխարհը փոխվում է,
ազգերի վարքը նոյնպէս, իսկ հա-
յերի սովորութիւնը մնում է նոյ-
նը: Չարգացած է հայը թէ խա-
ւար, գիտէ կարդալ թէ ոչ, ու-
սումնական է թէ տգէտ, դար-
ձեալ պապերի ինստիտուտը նորա
մէջ մնացել է անփոփոխ. հայը
միշտ աւելի է տրամադրված հա-
ւատալ հեռատանից եկած մի
ինքնակոչ վարդապետին, մի խա-
չազոյին, նա աւելի հեշտութեամբ

բաց կանէ իր քսակը մի թուկից
փախած քարոզչի խօսքից շարժ-
ված, քան թէ ենթարկվելով հենց
առաջի հայ լրագրի և նորա ըս-
տացած բոլոր թղթակցութիւն-
ների ազդեցութեան:

Ի՞նչ է առաջանում այս բանից.
Օգտութիւնը տարիներով պատե-
րազմում է տաճկաց դէմ, վատ-
նում է իր վերջի գնտակը, և վառ-
դի վերջի հատիկը, մնում է ա-
ռանց զէնքի ու հացի պաշարի,
բայց դարձեալ արին է թափում,
լրագիրները անդադար խօսում են,
դրամական օգնութեան հրաւի-
րում ազգի անդամներին, բայց ոչ
որ չէ լսում. ոչ որ չէ հետաքրքիր
թէ մի բուռ իր քաջամարտիկ ա-
րիւնակիցների ազատութիւնը մա-
հից վեր է դասում: Մինչդեռ
նոյն գէթութիւնների անուամբ գա-
լիս է մի կեղծ պատգամաւոր, մի
պրոպագանդիստ վեղարաւոր, իսկոյն
վաղում են ամեն կողմից նորա
մօտ և թափում են իրանց նուէր-
ները նորա փեշը: Օգտութիւն տա-
ն է և ու համար: Ճարպիկ վեղա-
րակիրը լցնում է գրպանները և
անհետանում այնտեղ, որտեղից
կուռնկներն էլ չեն կարող լուր
բերել...

Այսօր տաճկահայերի մէջ մի
ուրիշ շարժում է յայտնվում, որի
յաջող վախճանից կախված է
ազգի ընդհանուր բարօրութիւնը.
լրագիրները դա հշտ են տանում,
խօսում են ու խօսում, բայց մի
մարդ չը կայ որ ուշադիր լինի:
Յանկարծ դուրս է գալիս մի
ճարտարախօս վարդապետ և եկե-
ղեցու բեմը բարձրանալով սկսում
է քարոզ խօսել. «վա՛» բացական-
չում են ամեն կողմից, «մի՛»
հայոց ազգը որ և է մի բանի
կարոտութիւն է զգում, ո՛ր, ինչ-
պէս կը լինի, մի՛թէ մենք հայեր
չենք. ո՛չ, պարտաւոր ենք ան-
պատճառ օգնելու և այլն:» Այս-
պիսով կը տեսնէք որ քիչ ժա-
մանակվայ միջոցին վարդապետը
տանտակ հազարները ծոցը դրած
անյայտացաւ էլի այն աշխարհը,
որտեղից կուռնկներն էլ չեն կա-
րող խաբար բերել...

Վերջապէս վրա է հասնում
ազգին այնպիսի մի աղէտ, որ
անկարելի է լինում լրագիրների
հրաւերներին տկանջը խցել և մի
քանիսները սկսում են համոզվել,
որ լրագիրների միջոցով ուղարկած
փողերը չեն յիշվում լոկ ժապա-
ւինած գրքերի էջերում, այլ ամե-

նախտահ և աշխարայ ճանապարհ-
հով անմիջապէս հասնում են հար-
կաւոր կէտերը: Վասնորոյ բացի
սուրը հայերին իրանց փողերը
բաժանելուց, մի քանիսները խրմ-
բագրութիւններին էլ են նուէր-
ներ ուղարկում զանազան տեղեր
հասցնելու համար: Բայց խմբագրու-
թիւնները բաւական չեն համա-
րում ստացած նուէրները. հրա-
ւիրում են ամենքին ուժերը բազ-
մապատկել, ջանքերը մեծացնել,
ընկերութիւններ և մասնաժողով-
ներ կազմել օգնութեան համար,
մէկ էլ տեսար մարդիկ ներդաշնան
այդ հրաւերներից, ասելով. «հէր
օրհնած, էլ քանի մէկին տանք,
ո՛չ փող մնաց մեզ մօտ, ո՛չ հաց,
բոլորը սորա, նորա բաժանեցինք.
ուղարկեցինք Լճմիաձին, տուանք
այս ինչ վարդապետին, այն ինչ
պատուիրակին, բայց դուք էլի
մեզին ձեռք չէք քաշում...»

Հարց ենք առաջարկում. ո՞վ է
մեղաւոր, որ ամեն հասնողին բա-
ժանում են իրանց փողերը, ամեն
հասնողին ազգի պատուիրակ են
ընդունում, ջիւերը լցնում, իսկ լը-
րագիրներին ամենքից վերջը լսում:
Ո՞վ է մեղաւոր, որ սուրը հայերին
արդէն տուած հարկը հազարները

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՄԵՆԻ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՄ-ԹՈՒՐԿԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՋՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1).

Թուրքի արեգակը սաստիկ այրում էր. կարծես,
մթնոլորտի ամբողջ տարածութիւնը լցված լինէր
հեղեղ ասեղներով, որոնք կայծերի փոշու նման
շողշողում էին, կիզում էին և մեղմ ալիքներով
սփռվում էին դէպի ամեն կողմ: Տօթը անտանիկ
էր. թռչունները յոգնած, թուլացած, ծածկվել
էին ծառերի թաւաններում, որոնց վրա մի տերև
անգամ չէր շարժվում մտած քամուց: Միայն
ճանձները, մօծակները և մանր միկրոսկոպական
մեղմիկները անասնաբար ասպարէզ էին մտել և
միլիմետրով լուծվելով վիզվում էին, ծեփում
էին, շնչառութեան հետ մտնում էին մարդու ըն-
թանը, քիթը, ականջները, կամ իրանց թունաւոր
խայթոցներով աւելի էին այրում մարդու մարմնի
բաց տեղերը, քան թէ արեգակի հրեղէն ճառա-
գայթեմը:

Թերունի վաղարշապատը այդ ժամանակ ներ-
կայացնում էր մի տարօրինակ տեսարան:
Որ կողմ է նայում էիր, ամեն տեղ ամբողջված
էր մի արարափելի բազմութիւն: Կին և աղջիկ,
ձեր և երեխայ,—բոլորը կիտաների, բոլորը աղ-
քաւ,—թափված էին այնտեղ. փողոցները լի էր

մուրացկաններով: Էջմիածնայ վանքի պարսիկ
շուրջը և ներքը, Ներսէսի լին չբժակայ ծառերի
հովանու տակ, մինչև Գայիտէի վանքը, մինչև
նոյն կաթողիկոսից անկարկված անտառի վերջը,
ուր կար մի կտոր ստուեր, որ կարող էր պահպա-
նել արևի կիզող ճառագայթներից,—ամեն տեղ
կարելի էր տեսնել նոյն թշուառ և ողորմելի բազ-
մութիւն: Գրանք աղակերտից գաղթականներն
էին:

Երեք հազար ընտանիք, թողնելով իրանց հայ-
րենիքը, թողնելով իրանց տունը, տեղը և բոլոր
հարստութիւնը, թուրքի սրից և կրակից ազատ
վելու համար փախել, ապաստան էին դառն այս-
տեղ: Վաղարշապատում չը կար մի տուն, ուր 10
—20 ընտանիք այդ թշուառներից միմեանց վրա
ածված չը լինէին: Անասունների անտառները, մա-
րագները և բակերը լին էին նրանցով: Բաւական
չէր, որ պէտք էր կերակրել այդ անազին բազ-
մութիւնը, այլ պէտք էր և դարմանել և բժշկել
նրանց: Թողնելով Արաքիւրի հովանուն լեռնա-
դաշտերը, այդ անբախտ ժողովուրդը յուլիսի դը-
ժոխային տոթերի ժամանակ յանկարծ ընկել էր Ա-
րարատի մէջ, ենթարկվելով դանազան տեսակի հի-
ւանդութիւնների:

Այսօր էր, ամառնային միջօրէի այն ժամը, երբ
զիւղացու աշխատութիւնը դադարում է դաշտե-
րում, մէկը մարդը և երկրագործական անասուն-
ները քաշվում են մի հովանաւոր տեղ հանգստա-
նալու համար: Աւելի բախտաւոր արարածները ա-
ռատ ճաշից յետոյ քնած են լինում իրանց կովիկ
աննակներում: Օրվայ այդ ժամին, բազմաթիւ ա-
ղակերտից աղքատների թուում, որ դռնից դուռ ըն-
կած մուրացկանութիւն էին անում, իր վրա ա-
ռանձին ուշադրութիւն էր դարձնում առաւելա-

պէս մէկը: Դա մի մանկահասակ աղջիկ էր, որի
տարիքը 16-ից ավել չէ պիտի լինէին: Նիստը և
մաշված դէմքը, որ կողքնակով իր բնական գոյնը,
ստացել էր մի տեսակ դալկային դեղնութիւն,
նայողի վրա այն ազդեցութիւնն էր անում, որպէս
թաւամած վարդը, որ մօտ էր իր ցաւալի վախ-
ճանին: Սկզբից աղջիկը մէջ նկարված էր խորին
տխրութիւն: Գունատ շրթները ցոյց էին տալիս,
որ նա դեռ ոչ բոլորովին առողջացել էր իրան
մաշող հիւանդութիւնից: Այդ սղաւոր դէմքը, որ
մի ժամանակ իր գեղեցկութեամբ պէտք է չքան-
չելի եղած լինէր, իր այժման նիստաւորութեան մէջ
դարձաւ համակրելի և կախարդիչ էր:

Կարծես թշուառութեան դեռ կամեցել էր մի
չար կատակ խաղալ այդ աղջկի արարածի հետ,
և պարուրելով նրան իր քրքրված ցնդողներով մէջ,
աշխատել էր այլանդակել և նսեմացնել գեղեցկը
ու պատկառելին: Բայց գրանով աւելի գրաւիչ և
աւելի կարեկցութեան արժանի էր շինել նրան:
Հնամաշ և պատառուտած հագուստը հազիւ քո-
ղում էր կիտաների մարմինը, երևում էր, որ այդ
հագուստի ամեն մի կտորը նա մի բարեբաղձ ձեռ-
քից պէտք է ստացած լինէր, որովհետեւ թէ իրանց
ձեւերով և թէ գոյներով տարբերվում էին միմեան-
ցից. բայց դրանից, մի կտորը լայն էր, միւսը չա-
փազանց նեղ, մէկը սովորականից կարճ էր, միւսը
չափ երկայն:

Նա դանդաղ և դողդոջուն քայլերով գնում էր
զիւղի փողոցներից մէկի միջով. բութիկ ոտները
գծուարութեամբ էր կրում արեգակի ճառա-
գայթներից տարացած գետնի վրա, որ չիկացած
երկաթի նման այրում էր: Նա իր հետ ման էր
ածում երկու փոքրիկ երեխաներ, որոնք երկու
հրեշտակների նման քարշ էին ընկած նրա ձեռքե-

րից: Երկար նա գնում էր, և գլուխը ծածկ, լուռ
ու մունջ կանգնում էր աների դռների մօտ, և
առանց համարձակվելու ներս մտնել ժամերով
սպասում էր, մինչև տանեցնելից մէկը նրա վրա
ուշադրութեան կը դարձնէր և մի կտոր հաց կը
տար: Երևում էր, որ նրա հպարտ շրթները չէին
սովորած ողորմութիւն ինքեղեղ երևում էր, որ
նա անվի և մեծացել էր: Աւելի բարեբաղձ վի-
ճակի մէջ, իսկ այժմ տխուր հանգամանքների
պատճառով ընկած էր մի տարօրինակ կեանքի
մէջ: Ընկճված անձաւորութիւնը, սկզբական ար-
ժանաւորութեան վրաւորանքը, վաղեմի փառքի
կորուստը, բարոյական տանջանքը,—բոլորը միա-
խառնվելով, լցրել էին նրա սիրտը անկարագրելի
զաւնուլթեամբ, որ աւելի էր մաշում և տրորում
նրան, քան թէ այն ցաւը, որ արդէն սկսել էր
սպանել նրա մարմինը:

Նա դեռ անցնում էր մի դռնից միւս դռն, բայց
նրա վրա ոչ որ ուշադրութիւն չէր դարձնում:
Վերջապէս նա դապելով իր ամօթխածութիւնը,
ստոր ներս դրեց մի տան չեմքից, և հանգիստելով
տանտիկնոջը, երկուստ ձայնով ասաց.

—Մի կտոր հաց:—
Այդ ձայնի մէջ կային բոլոր նշխարները, որ
արտայայտում էին դիտարկ արտի դառն և ցաւալի
զգացմունքները:
Տանտիկնը կոպիտ ձայնով պատասխանեց.
—Կտորվէք դուք, որ մէկիդ տանք...
Աղջիկը նայեց իր շուրջը, տեսաւ, փրաւ, իր նը-
ման շատերը լցված էին այնտեղ: Նա պարտաւոր
էր իրօքին հեռանալ, բայց նրան պահել միտք:
Նա իր մասին չէր մտածում, թէ և քաղցած էր,
բայց մտածում էր այն երկու փոքրիկ երեխաների
վրա, որ ոչինչ չէին կերել, մտածում էր նը-

մնում են միայն պետական բան-
կերում ազգի անակնկալ կա-
րեաց համար տոկոսներ բերելու
նպատակով, իսկ երբ սովից ջնջ-
վում է ամբողջ Հայաստանը, երբ
խմբագրութիւններն են մնում օգ-
նութեան միակ յուսատեղիք, այդ
ժամանակ տոկոսաբեր հարկեր
հազարներ նուիրած մարդիկ նե-
ղանում են, որ խմբագրութիւն-
ները չեն բաւականանում մի բանի
հազարներով այլ էլ են պահան-
ջում: Երբ սովը մոռացած ամեն-
քը մտածում են հիմայ փրկել
ազգը աւելի վատթար դժբաղ-
դութիւնից՝ վարակիչ հիւանդու-
թիւնից, որ արդէն բացվել է
Հայաստանում, միթէ մեղաւոր
է հայ լրագրութիւնը, երբ նա մի
բանի տեղ չէ դնում իր ստացած
մի բանի հազար ռուբլները, այլ
կրկին օգնութիւն է պահանջում,
օգնութիւն, որ հարկեր հազար-
ներով պիտի միայն հաշված:
Մեղաւոր է լրագրութիւնը, երբ
նա մտադիր չէ լռելու և ոչ որին
խնայելու մինչև որ չը հասցնեն
ռուսահայերը այնչափ օգնութիւն,
որով կարելի կը լինի ազատել մի
մեծ տարածութեան վրա սիրոված
մարդիկներին, որոնց վրա է իւրա-
քանչիւր հայ մարդու յոյսը: Ո՞վ
է մեղաւոր. լրագրութիւնը թէ
անփոյթ նուիրատուները:

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՐՍԻՑ

5 ապրիլի

Սհա ձմեռն անցաւ, գարունը իր քաղցր եղա-

րանց հիւանդ մօր վրա, որ անօթի պառկած էր:
Նա արտասուքը սրբեց և կամենում էր կրկին
իր աղաչանքը: Այդ միջոցին փոքրիկ չնիւղ դուռն
պրծաւ դրան տակից և իր սուր ատամներով քարշ
ընկաւ խնդ՝ աղկալ փեշերից: Նա սարսափելով
դուռն փակաւ, իր հագուստի մի մասը թողնելով
շան բերնում: Երկու փոքրիկները ցաւով ճիչ
բարձրացրին և փոքր էր մնում, որ սրտածաք լի-
նէին:

Նա կապկապելով իր հագուստի ծուէնները,
այժմ սկսեց զիմը դէպի վանքը: Երկու փոքրիկ
երեխաները ուրախութեանց մոռացան իրանց լա-
ցը և երկիւղը, երբ ճանապարհի վրա ընկած տե-
սան մի կտոր ձմերուկի կեղև: Երեխաներից մէկը
վազեց, վեր առաւ կեղևը, և իր փեշերով հողն
ու փոշին սրբելով, սկսեց կրծել: Միւս երեխան
աշխատում էր խլել նրա ձեռքից, ասելով.—ինձ
էլ տուր, ես էլ քաղցած եմ: Երկուսի մէջ առաջ
եկաւ մի փոքրիկ կուռ: Մանկահասակ աղջիկը
հանգստացրեց նրանց, և բաժանելով կեղևը, երկու-
սին էլ հաւասար մասն տուց:

Այդ միջոցին շտապով անցնում էր նրանց մօ-
տից մի երիտասարդ: Նա տեսնելով աղջկան եր-
կու փոքրիկ երեխաների հետ, ճանաչեց նրանց, և
մօտեցաւ:

—Դու զեռն ոչ բոլորովին առողջ ես, ասաց
նա,—ես պատուիրեցի քեզ դուրս չը գալ, դու
դարձեալ ման ես գալիս:

Աղջիկը չփոքրեցաւ և չը դիտէր ինչ պատա-
խանէր: Նա, իրաւ, առողջ չէր, նա այնքան ակար
էր, որ հազիւ կարողանում էր իրան ոտքի վրա
պահել: Երիտասարդը նկատեց երկու երեխանե-
րին, որոնք դեռ կրճոււմ էին ձմերուկի կեղևը:
Նա խլեց կեղևը, և մի կողմ ձգելով, ասաց.

—Նախնայով կը ժպտայ: Բնութիւնը դարդարվում
աղնուանում է, սառնոյցներն հալվում, ժայռերից
վայր են թափվում, ալիք են դառնում ու կորչում,
բայց տակաւին աղքատների վիճակի դառնու-
թիւնը չէ մեղմանում: Նորա այդ ծանր շրջան կը
կրեն իրանց պարանոցների վրա և ու գիտէ թէ
որքան ալ ևս կրելու են—թանգութիւնը, որ մեծա-
մեծ արմատներ կը ձգէ Վարսի մէջ իր նահանգնե-
րով: Արևիկի պուրը ծախվում է հրապարակի մէջ
4 ռուբլով, գարնի՝ մինչև 3 ռուբլի, խոտի՝ 2
ռուբլ 60 կոպէկ, մի ձուռն արծէ 7 կոպէկ և
այլն: Այսպիսի առաքելական գին երբեք չէ
տեսնված Վարսում և ծերեր իսկի չեն լսած ի-
րանց նախնիքներից:

Այն Վարսը, որ համարեալ ողջ Վրաստան կը
կառավարէ և ցորեանի կուտակված շեղկերը
բացօթեայի մէջ մնալով, անձրևների հեղեղները կը
տանէին և ալիքի պուրն 15—20 կոպէկ կը ծա-
խվէր, այժմ անհախաճելի դրութեան մէջ է և
նորա որդիքը քաղցածութիւնից կը տանջվին:
Երբ այսպիսի թանգութիւն մը զգալի լինի հարս-
տին, ապա իր աստիճան չօչափելի է միջին դա-
նակարգ ժողովրդին և ծառայողներին, որոնք ապ-
րում են իրանց որոշեալ բաժնիկներով, իսկ աղքատ
դասի համար մահաւիթ է: Այն կարող լուծեան
տալ այն սրտածմիկ տեսարանը, որին այսօր վը-
կայ էի փողոցից անցկենալիս: Մայրը նստած պա-
տի տակին, կաթնաբուծ. երեսնան առած ստիքին
աղի արտասուք քայ լինելով ողորմութիւն կը խն-
դէր անցկեցողներից և յայտնում էր իր չորս օ-
րուայ եռանց պատառ. հացի մնաւոր, իսկ միւս երեք
փոքր երեխայք, որը քաղցից էր քարշ տալիս,
որը վզովն էր փաթկնվում ու հաց էին ուզում
մօրից: Այլ ևս մտաբանիկ աղքատիկ կին մը, զօ-
րութիւնից սպառված կուշ էր եկած, սովալուկ
ընկած մի անկիւնում, ոտներն չէին հնազանդում
խնդին: Սա սովառանջութիւն չէ, ապա ինչ է:

Շատերը հացի պակասութիւնը վերաբերում են
անցեալ 1879 թվականի երաշտութեանը, որ պա-
տանաց Վարսի սահմանների մէջ, բայց բոլորովին
համակրովելու չէ այդ կարծիքը, որովհետև շատ
տարիներ տաճկական կառավարութեան ժամա-
նակն լինելով այս սահմաններում, նրանց անհատ-
նելի առատութիւնը փորձով իմացած եմ: Պատա-
հել էին շատ երաշտութիւններ, ինչպէս անցեալ
տարին, բայց նորա չեն ունեցած նշանակութիւն,
որովհետև Վարսը այնքան ընդարձակ սահմաններ
ունի և բարեբեր են նրանց հողերը, թէ մի մասն
ալ որ բուռնէր, դարձեալ առատ էր լինում հացը
և լիւսպէս էր կառավարում ոչ թէ միայն իրանց
բնակիչներին, այլ տասն և քսան հազար ստմարնե-
րով դուրս էին տանում: Այլ է արտերի ամալի ու
անմշակ մնալը: Անցեալ տարի սահմանների տաճ-
կական զիւղերը, որոնք մեծ մասն էին կազմում,
գաղթելով արտասահման, երկիրը մնաց բոլորովին
անմշակ: Թէ և կը գտնվին այժմ միջանի հայերի և
տաճկաց չէն զիւղեր, բայց նոցա արտերը երաշ-
տութեան զոհ եղած լինելով՝ նորա ևս կարօտ են

—Ինչպէս կարելի է ուտել այդ:

Երեխաները աւելի համարձակ գտնվեցան, քան
չփոքրած աղջիկը, և արտասուքը աչքերում պա-
տախտանեցին:

—Քաղցած ենք:

—Միթէ վաղը ուր մեզ չեն կերակրում, դար-
ձաւ երիտասարդը դէպի աղջիկը:

Մանկահասակ աղջիկը փոխանակ հարցին պա-
տախտանեցին, իր գեղեցիկ, նուազած աչքերը դէ-
պի գետին ուղղելով, մեծ դժուարութեամբ ա-
սաց.

—Եթէ կարելի էր, մեզ համար մի ուրիշ տեղ
ձարէիք, և մենք դուրս գայինք վանքից:

—Երևի, այն անպիտան վարդապետը մեզ վատ
է նայում:

Աղջիկը ոչինչ չը պատասխանեց, և շարունա-
կելով նայել դէպի ցած, կարծես, չէր ցանկանում
իր բազմիմաստ հայաքը դարձնել դէպի հետա-
քըրի երիտասարդը, զգուշանալով, որ նա իր
դէմքից չը գուշակէր այն, ինչ որ ինքը ակամայ
ստիպված էր թաղցնել սրտում:

—Հասկանում եմ...պատասխանեց երիտասար-
դը խորին վրդովմունքով.—Հիմայ գնա, այդ շո-
գին լաւ չէ ման գալ, դու հիւանդ ես, կարող ես
բոլորովին տկարանալ քեզ, մէկ ժամից յետոյ մեզ
մօտ կը լինեմ, և ամեն ինչ կը կարգադրեմ, որ
լաւ հոգ տանեն ձեզ:—Ինչպէս է եղորդ կինը:
Ելի այնպէս է, այս դիւնը աւելի անհանդիստ
էր, պատասխանեց աղջիկը տխուր ձայնով: Եւ
այժմ իր ամօթխած աչքերը դարձնելով դէպի ե-
րիտասարդը, հարցրեց.

—Ի՞նչու մեզ չէք թողնի վանքում, այնպէս չէ,
պարսն:

—Լաւ է, ես մեզ համար մի ուրիշ բնակարան կը

օգնութեան և այն աստիճան է նրանց կարօտու-
թիւնը, որ ցանկեւ համար չունեն մի հատիկ ցո-
րեան անգամ:

Լսում ենք, որ տեղիս նահանգապետ նորին գե-
րազնացութիւն պ. Ֆրանգիսին յուշն հասուցանե-
լով առ այս Նորին Կայսերաւան Բարձրութեան
փոխադրային Կովկասու, խնդրել է բալ ճարգոյն
անօրէնութիւն այս թշուառութեանց առջին առ-
նելու համար, որուն վճարել է, չը գիտեմ որքան,
արքունի գանձարանից դրամ, որ ցորեան և քարի
գնեն ու բաժանեն նորն չքաւոր զիւղացիներին
ցանկեւ համար: Այս ամեն թշուառութեանց վերջ

ՆԱՄԱԿ ԴԱՐՍԻՑ

7 մարտի

Եթէ մի փոքր ակնարկ ձգենք Վերքէնդի հայե-
րի տասը տարի սրանից առաջ ունեցած շիւթա-
կան դրութեան և բարոյական կրթութեան վրա
և համեմատենք այժմանի հետ, մեծ զանազանու-
թիւն կը տեսնենք: Եթէ անստուշ լուսանկարում,
ճիշդ է, մեր Վերքէնդի տօրոնի ծաղկած ժամա-
նակն էր, ժողովրդի վիճակը այնպէս դառն չէր
ինչպէս հիմա, սակայն բարոյական կողմից շատ
յետ ընկած էր և այն հոգին ու սկզբը չունէր,
ինչ որ հիմա, ու կը մտածէր այն ժամանակ զըպ-
րոյի, աղքի կամ որ և է ազգօգուտ գործի հա-
մար, ում պէտքն էր թէ մի տեղ այս ինչ կարօ-
տութիւնը կամ տող հարուածներ է տալիս, կար-
ծես թէ ամենը նպատակը, ամենը աշխատանքը
մէկ էր՝ գիւղը և գիւղի հարստութիւն որչափ կա-
րելի է մեծ քանակութեամբ, ինչու որ բարոյա-
կան կրթութիւնից զօրկ ժողովուրդը դրա մէջ
էր տեսնում իր կենսիկը: Երբ անկողնի պատկերը
Վերքէնդի հայը տօրոնի յաջող ընթացքի վրա
յոյսը դրած, ոչինչ յառաջադիմութիւն չէ ցոյց
տալիս զիւղատեսակութեան կամ վաճառականու-
թեան միւս ճիւղերի մէջ և ամենին չէ հետա-
քըրքովում մինչև որ իր երազած լաւ ապագան
հետզհետէ նսեմանում է և վարագուրվում: Տօրոնի
ընկնելով, կարելք ստիպում է Վերքէնդի հային
ապրուստի նոր դուռը ընտրել—պղծգործութիւնը,
որ վաղուց աչքից թողնված՝ երրորդական տեղ
էր բռնում: Մի կողմից երբ շիւթականի կշիւը
ցածրանում է, ակնում է մտաւորականութիւնը բարձ-
րանալ, յղանակ է դադար բնակուլ մտադրութիւ-
նը, որ և անցեալ տարի մարտի մէկին իրագործ-
վում է. բեմ են դուրս գալիս հայ կանայք և օ-
րիւղներ, որ առաջ պատարակելի բան էր համար-
ված և այդ պաշտօնը աղամարդիկ էին վարում,
սարքվում է վիճակախաղ բարեգործական նպա-
տակաւ, օտարամոլ ընտանեկներում երևում է
հայախրութեան նշաններ, հայ լեզուն սակաւ առ
սակաւ մտաւր է գտնում այնպիսի տեղեր, ուր ա-
ռաւ նրա հոտն անգամ չը կար, արեւմտեցի
«Արարատեան» ընկերութեան ձայնը հասնելուց

ճարմի, ասաց երիտասարդը և շտապելով հեռա-
ցաւ, իր մարում կրկնելով. «Ես արած, ինչ
չուտ ձանձրացրեց քեզ վանքը...»

Երիտասարդը բռնել էր, մի հարուստ վաղոր-
դապատիկ կալուածատիրոջ որդի: Նա նոր էր ա-
ւարտել իր ուսումը: Ս. Պետերբուրգի համալա-
րանում, և որպէս նոր օրդէնի մէջ մտած ապակե,
ընկել էր աշխարհ, արկածներ էր տրուում, իր ար-
հեստին վերաբերեալ հերոսութիւնները ցոյց տալու
համար: Աշակերտից դաղթականները, իրանց բազ-
մաթիւ հիւանդներով, բաց արին նրա առջև գոր-
ծունէութեան մի ընդարձակ ապագայի թաղիւ:
Երբ ցանկութիւններով իր երկամարդի անխնայ
եռանդը մեծ բաւականութեամբ էր գտնում այդ
թշուառներին օգնելու գործում: Նրա մէջ միա-
ցած էին՝ արհեստը բռնկի առաքելութեան հետ:
Նա ոչ միայն անվարձ այցելութիւններ էր անում
և ձրի դեղեր էր բաժանում հիւանդներին, այլ հոգ
էր տանում և նրանց բնակարաններին և լաւ կերա-
կրվելու մասին: Այդ էր պատճառը, որ մանկա-
հասակ աղջիկը այնպէս մտերմաբար դիմեց նրան,
աղաչելով, որ արհեստ համար մի այլ կացարան
տնօրինելու հոգ տանէ:

Բռնկի հեռանալուց յետոյ աղջիկը շարունակեց
իր ճանապարհը դէպի վանքը: Օրօրվելով, տա-
տանվելով, նա հազիւ կարողանում էր փրկել իր
քայլերը: Մի քանի անգամ կանգ առեց, մի քանի
տեղ նստեց, մինչև յոգնութիւնը անցնի: Վաղի
հանդէպ դտմով զինեաներից նրան կանչեցին,
խոտտանալով, թէ փող էր տան: «Այդ մարդիկը
աւելի վատ են, քան թէ քրդերը...» ասաց նա իր
մտքում, և կանգնելով, շարունակեց իր ճանա-
պարհը:

Նա անցաւ պարտեզը, անցաւ վանքի գլխաւոր

Գէրբէնդի թէ կանայք և թէ տղամարդիկ, չը նա-
խելով իրենց նեղ վիճակին, առատապէս օգնում
են, և այժմ երբ լսեցաւ վանի սովառանջների
գոյժը, Վերքէնդը դարձաւ ձեռք է կարկառում
իր չքաւորութիւնից բաժին հանելով քաղցած ա-
րիւնակիցների համար մինչև 260 ռուբլ *): Այս
ուրախալի երևոյթները տեսնելով, չէ կարելի չօ-
րախանալ և լաւ ապագայ չը գուշակել:

Բայց, սիրելի ընթերցող, մի կարծիր որ Վեր-
քէնդի բնիկ ժողովուրդն է այս խրատուններն ա-
նում, ամենին չէ. նա բարակ մտածողութիւն և
դատում չունենալով, շատ անգամ արգելք է
դառնում առաջադիմութեան ապագայը մտադ-
ներին. այս տասը տարեկան ընթացքում չէ պա-
տահած մի գործ, որի սկզբնապատճառը բնիկ
ժողովուրդը եղած լինի, և թէ երևում է մի հա-
մակրութեան նշան բնիկների կողմից, սակաւթիւ
անձնիքների մէջ է և այն էլ մեծ մասամբ հե-
տեւութիւն և նմանութիւն է:

Իսկապէս ասելով, մեր քաղաքի կենդանութիւն
տնտեսքը եկուր հայերն են, թէ և մենք այդ
ճշմարտութիւնը պատրուակում ենք և ամեն քայ-
լափոխում աշխատում ստորացնել նրանց արժա-
նաւորութիւնը, որ մերկից շատ բարձր է: Եկուր
հայ մեր մէջ վաճառականութիւն անելով, հարս-
տանում է մեր քաղաքը շիւթականապէս. նա
Վերքէնդի ընկած բարոյական դրութիւնը ջանք է
անում բարձրացնել, բայց մենք կուրորէն նրան
կեղծելով ենք անուանում և չենք հեռատեսում, որ
մենք աւելի պէտք ունենք նրանց, քան թէ նրանք
մեզ: Եթէ ուզում ենք մեր անձնական շահը,
պէտք է թողնենք կուրթիւնը, սև նախաձեռն,
սիրով միանանք եկուորների հետ և ընդհանուր
ուժով գործենք հասարակութեան օգտի համար և
ոչ թէ հակառակ սուղութիւններ բռնելով, մեր
ձեռքով մեղ համար դառն ապագայ պատրա-
տենք: Իսկ եկուորներին կը խնդրենք մեր կողմից,
որ ինչպէս մինչև այժմ առանց ուղադրութիւն
դարձնելու անտեղի խօսակցութիւններին, աշխա-
տել են, աշխատեն և այսօրհետև առանց վատեղու-
յուսալով որ ճշմարտութիւնը միշտ յաղթող է և
չուտ կամ ուշ կը յայտնվի:

Բնիկ Վերքէնդի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԻՐ

Հինգշաբթի, մայիսի 15-ին, հայ դերասանական
մշտական խումբը, յոգուտ պ. Ստեփանեանցի
ներկայացրեց «Դոն-ժուան», կոմիկիա 5 արա-
րածով, հեղ. Մօլլերի, թարգ. Ա. Միքայիլ Մանուկ-
նեանի, և «Տօտա» փողովիւր 1 արարածով,
թարգ. Յ. Տէր-Գրիգորեանի: Վճարվելի մէջ պ.

*) Այս փողոցը պ. Յ. Վալտեանի խնդի-
տելով և պ. պ. Վեդրգ Շահնազարեանի ու Սար-
գիս Շահինյանցի աշխատութեամբ են հաւաք-
ված: Ինչպէս պարսկերէն աղագրական օգին
յայտնի է թէ Վերքէնդում և թէ «Մշակ» ըն-
թերցողներին:

Բ. Դ.

մուտքի մօտից, պտոյտ տուեց պարսպի արե-
մտեան կողմով և դուրս եկաւ այն դրան մօտ,
որ տանում է դէպի լինը և անտառը: Այս դռնով
նա մտաւ Կաղարապատ: Վաղի այդ մասը տն
օրերում ծառայում է որպէս հիւրանոց բաղնիքի
ուրախութեան համար, իսկ այժմ լցված էր ա-
լաղկերտից հիւանդներով: Նա մտաւ ներքին յարկի
խուցերից մէկի մէջ: Այդ խոնաւ խուցի մէջ,
զրկված օդից և լուսից, կարծիր աղիւններով պա-
տած յատակի վրա, պառկած էր մի կին: Ոչ մա-
հիւ ունէր նա և ոչ մահճակալ. տակին ձգած ու-
նէր մի խուրձ յարդ, իսկ վրան ծածկած ունէր
մի փայտի կտոր: Երկու երեխաները վաղեցին և
գրկեցին հիւանդ մօրը, և սկսեցին համբուրել նրա
ոսկրացած ձեռքերը: Բայց նա չը պատասխանեց
սիրելի զաւակների զգուհներին, որովհետև այդ
րօպէնում քնած էր, աւելի ճիշդ ասած, դտան-
վում էր մի տեսակ անզգայութեան մէջ:

Մանկահասակ աղջիկը նկատեց երկու փոքրիկ
երեխաներին, որ չանհագոտացնեն հիւանդ մօրը,
այլ դնան դուրսը խաղալու: Նրանք հնազանդու-
թեան դուրս եկան, և նստելով խուցի դրան մօտ,
սկսեցին հողով, խճիրով և չփերով իրանց համար
փոքրիկ տնակներ շինել, և նրանցով դուրսանալ
Իսկ ինքը՝ աղջիկը պառկեց մերկ յատակի վրա,
և թեք բարձի փոխառէն նեցուկ տալով գեղեցիկ
զինին, արտասուքով լի աչքերը դարձնելով դէպի
հիւանդը, և սկսեց նայել նրա վրա: Նա այնչափ յոգ-
նած էր, այնքան թուլացած էր և այնքան հոգնապէս
տանջված էր, որ ցանկանում էր մի փոքր քնել, մի
փոքր հանգստանալ, բայց ակամայ արտասուքը խնդ-
րում էր նրան, և վտալի աչքերը փակել կարող
չէր: Նա այդ աչքերը կը ցանկանար յաւիտեան
փակել և չը տեսնել լույս աշխարհը, որ այժմ խա-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան վարչութիւնը պատուով տալիս յայտնել, որ արդէն դուրս եկան մասնակի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրադատներին մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԻՆՏԵՐՍՈՒՆԻ. ԹԱՎԱՍԱՆԳՐՈՐ ՏՆԱԿԸ, իսկ, երեխաների համար Պալմէր, Թարգ. օր. Ե. Տէր-Մարկոսեանի: Պատկերազարդ և կազմած—60 է.:

№ 5 ՄՈՐԵՆԻ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆՋՆՈՒ ԷՆԱՐՆԵՐԸ, աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Օտարաբարացիք կարող են զիմել Հեռանալ հասցեով՝ Вь Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

Փետրվարի 12-ից ԲԱՅՎԵՑ ԻՆՏԵՐՍՈՒՆԻ ԲԱՅՈՎԻ տանը ԿՈՆՏԻՆԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (печарня) մագաղին «ВАРШАВСКАЯ ПЕКАР-НІЯ» վերնագրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակի մօրեղէններ, նոյնպէս կը վաճառվին անազան տեսակի կօշիկներ և արժանի գույք: Թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկաւ... Եւրոպայի քաղաքներէ կարող են զիմել հեռանալ հասցեով. СОЛОЖАКИ, ВЪ ВАРШАВ-СКОИ ПЕКАРНИ Мартыроу Ахназарову. Պատկերները կը կատարվին ամենայն ճշգրտութեամբ, գնորդներին մեծ զիջումն անկող և փոստի ծախար մեղ վրա առնելով: Կոնֆէկաների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ОСОБА, знающая РУССКІИ, ФРАН-ЦУЗСКІЙ, НѢМЕЦКІЙ языки и начало МУЗЫКИ желаетъ получать мѣсто ГУ-ВЕРНАНТКИ. Объ адресѣ узнать на ПОЧТОВОЙ СТАНЦІИ ВЪ ДАМСКОЙ КОМНАТѣ.

ՄԻ ՏԻՎԻՆ, որ գիտէ ռուսերէն, ֆրանսիերէն, գերմաներէն և անգլերէն և երաժշտ. ՏՈՒԹԵԱՆ սկիզբները, ցանկանում է ՏՆԱԳԻՆ ՎԱՐՓՈՒՀՈՒՄ տեղ ստանալ: Հասցէն իմանալ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ, ԿԱՆԱՆՑ սենեակում:

3—3

Մամուլի տակից դուրս եկաւ դօկտօր Բօկի «Առաւել առողջապահութեան» գրքայիլի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի կողման սեան Կրապաճառանոցում: Գինն է 35 կօպ.

Դուրս եկաւ մամուլի տակից և ԾԱԽՎՈՒՄ է թէ ԿՆՏՏՐՈՒԱԿԱՆ և թէ Զ. ԳՐԻԳՐԵԱՆՆԻ գրադատանոցներում և պ. Մատուրեանի խանութում «ԲԵՐՈՒՄՈՒՄ» և «ԲԱՐԴՄԱՆՈՒՄ»-ի, պ. Ե. ԱՎԱՍԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Արծրունու: Գրքը բաղկացած է 243 ԵՐԵՄԵՅԻ: Գինն է 1 ր. 25 է.:

5—5

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՄՆԱԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՎՈՏԵԱՆ ԶԻՅ ՄԻՆՉԵՐԻ 1 ԺԱՄԱՆ:

Երկուշաբթի. Գալթօնի կանանց հիւանդ. Գօրալի վիճիչներին հ. Բօտի-նեանց կանանց և երեխաների հ. Բիււշարեանց խորհրդակցան և աշքերի հ. Ետեմօրօրսկի վերնաբան և կաշու հ. Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկի վիճիչ խորհրդակցան հ. Վ. Գօրօվ վերնաբան և բողա-վի հ. Բէյլի աշքի հ. Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօզլեա գօլի Լիսիցի վիճիչ և Կ. Բիւշարեանցի հ.:

Չորեքշաբթի. Լիսիցի վիճիչ Բուդ-գօլի վերնաբան հ. Ետեմօրօրսկի վերնաբան և կաշու հ. Աստուածատու-րօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. Գօրօվ վերնաբան և բողալի հ. Բօտի-նեանց կանանց և երե-խաների հ. Լիսիցի վիճիչ և Կ. Բիւշարեանցի վերնաբան հ. Բիււշարեանցի վերնաբան և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գալթօնի կանանց հ.,

«ԵՊՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԿ.»

Առեւտրական առեւտրային յայտնում է, որ գնումներին մինչև նոր փոփոխութիւնը վը-նարում է

1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիւներին... 4 1/2% մինչև պահանջներ... 4 1/2%

2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամ-սով... 6% 9 ամսով... 6 1/2%

1 տարով... 7 1/2% 1 1/2 տարով... 8% 2 տարով և աւելի... 8 1/2%

3) Մասնաւոր գնումներին առաջին կարգի պայմաններին... 9% Գումարներ տարւ ժամանակ վերջում է Մի. ամսվայ ընթացքում... 10% և շաբաթվայ... 9%

ԱՌԵՆՏԻՆԱՆ տան ԳՐԱՍԵՆԱԿ ԳՆԱԿՈՒՄ է ԼԶ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ տանը, Ալէքսանդրեան աշգու. գիւմուլ և բաց է մուտքեր ընդունե-լու և վերջում պարտքերի հանգցնելու հա-մար ՀԱՍԱՆԱՎ օրըք առաւօտեան 8—2 ժամը, իսկ ՏՆԱԳԻՆ առաւօտեան 8—10 ժամը:

2—3 (2)

ԵՊՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԿ.

ԱՌԵՆՏԻՆԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՌՐ ԳՐԱՍԵՆԱԿԸ

Յայտնում է հրատարակութեանը, որ ցան-կացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսները յետաձգու-թեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկրոր ժամանակաւորացում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն խի կանաւորայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակի տոմսա-կներ: Գրանցեալը գտնվում է Ալէքսանդրեան աշգու. հասցեով, Փոստմատի տանը:

10—10

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՎՍԵՍԵԱՆ

ԲԵՆԵՐՈՒԹԵԱՆ

Որ հայոց փողոցում ամաններ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նոսաի է ուղարկել քաղաքային վիստայով, լուսնի իրան թէ ի՞նչ հասցեով պէտք է ուղարկել պատահալանք, որովհետեւ նամակները արա-նոված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

Յովհաննէս Մ. ԲԵՆԵՐՈՒԹԵԱՆ

Մինկի վիճիչ խորհրդակցան հ. Կրասնօ. զլեա գօլի Լիսիցի վիճիչներին հ. Բա-խուտով մանկաբարձական, կանանց և ե-րեխաների հ. Ետեմօրօրսկի և Ասա-վաճառու օրօվ վերնաբան և կաշու հ. Բաբայեան ջղային և հոգեկան հ. Ետեմօրօրսկի վերնաբան և կաշու հ. Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Ետեմօրօրսկի վիճիչ և Կ. Բիւշարեանցի վերնաբան և կաշու հ. Ետեմօրօրսկի վերնաբան և կաշու հ. Աստուածատու-րօվ կանանց հիւանդութիւնների:

Զորեքշաբթի. Լիսիցի վիճիչ Բուդ-գօլի վերնաբան հ. Ետեմօրօրսկի վերնաբան և կաշու հ. Աստուածատու-րօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. Գօրօվ վերնաբան և բողալի հ. Բօտի-նեանց կանանց և երե-խաների հ. Լիսիցի վիճիչ և Կ. Բիւշարեանցի վերնաբան հ. Բիււշարեանցի վերնաբան և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գալթօնի կանանց հ.,

Բժշկա Զ. Գրիգոր Լիսիցի:

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կը-կաւին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև աւստի վերջը, հետեւալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կաւկաս. Թանգոյեան օրիորդական ուսումնարանում:

- 17 — Կաւկաս. Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
- 19 և 20 Կաթողիկէ Ս. Դէորդ եկեղ. ուսումն.
- 22 — Հաւարարի Ս. Մինաս եկեղ. եղբորեան ուսումն.
- 23 — Չուղուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
- 24 — Չորաբաշի և Շամքոռեցոց եկեղ. ուսումն.
- 27 և 28 Հաւարարի Մարիամեան օրիորդ ուսումն.
- 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Գ. Բարխուդարեանց

Երկու ֆրանսիացի ՕՐԻՈՐԻՆԵՐ ցանկանում են ընդունել իրանց մօտ երեխաներին դասեր տալու համար, առաւօտեան ժամի 9-ից մինչև ժամի 1-ը: ԳԱՍԵՐ, կը լինեն ֆրանսիերէն, գերմաներէն լեզուներից և մօզլիկա-լից:

Հասցէն՝ Սօլօվիլի, տուն Թրքերի: № 14. 3—3 (1)

Շաբաթ մայիսի 24-ին, «ԱՆՍՏԱՆ»-ը լը-րագրի խմբագիրը առաւ լեզուի հրատարա-կական գաստատութիւն կանի ԿԱՆԱՆՑ ՀԱՐ ՏԻ մայրն: Կարգաւ տեղը, ինչպէս նաեւ դաստիարակութեան բովանդակութեան մանրա-մանութիւնները ամենաբարձր միջոցում կը յայտնվին տպագրակա: Տոմարներն առա-ջուց առնել կարելի է Առեւտրական գրադա-ճառանոցում: Զարգացող Գրիգորեանի, Վար-դանեանի և Շահ-Աղիկեանի գրադատա-նոցներում:

1—3

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՀԱՆՆԵԱՆ օրիորդաց ու-սումնարանում ԳՆԱՌՈՒՄՆԵՐԸ լինելու են ՀԵՏԵՆԵԱՎ ԿԱՐԳՈՎ.

Մայիսի 19 և 20 կրօն և Արարան պատ-մութիւն.

- 22 և 23 հայոց լեզու.
- 26 և 27 առաւոյ լեզու.
- 28 Թուրքաւսումն.
- 30 և 31 Աշխարհագրութիւն, պատմու-թիւն և բնական գիտութիւններ:

1—5

ՆՈՒՆՈՒՔԻ ԶԻՆԳԵՐ

Մենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համ-բաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազ-մուածքին պարզութեամբ, հաստատութեամբ և այլալերալ աշխա-տութիւններն կատարելով, սնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ գմեղ համբելու մէկիկ մէկիկ իրենց գերա-զանցութիւնն ուրիշ հնարուած նման աւարկայից վրա:

Վերոյիշեալ Նիւո Լոնքի Օլիկեր ընկերութիւնը այս ապրիլ սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր բաղադրներու պէս, հոս ևս՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Մամանակի փողոցն, Օլուպալովին տունն, Երևանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուղող ստանալ այսպիսի մեքենայ գիմել հոս միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս բնիկ նորաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Օլիկերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացունեն սեպհական մերոնց բաւութեան անունն:

Ուրիշ բաղադրներու բնակիչը այլ կրնան գիմել մեղ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուղերու համար, որ կը խրկեմք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պա-տասխանեմք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է:

Դ. Նոյմլինգըր. Թիֆլիս.

Գ. Նայոյիկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի: Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները:

3—3 (2)